ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» հունիսի 2011թ. N-

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ԱՆՎԱՆԻ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ ենթակետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 31.08.1999թ. թիվ 551 որոշմամբ՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է*.

1. Հաստատել Երևան քաղաքում պատմամշակութային իրադարձությունները կամ անվանի մարդկանց հիշատակը հավերժացնող հուշատախտակների տեղադրման կարգը՝ համաձայն հավելվածի։
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ Գ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ
Ա. ԱՍԱՏՐՅԱՆ
Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆ
Մ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ
Մ. ՂԱԶԱՐՅԱՆ
Լ. ԻԳԻԹՅԱՆ
Մ. ԴՈՎԼԱԹՅԱՆ
Ա. ԵՐՆՋԱԿՅԱՆ

Հավելված
Երևանի ավագանու

«-----» հունիսի 2011թ.

հ.----- որոշման

ԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ԱՆՎԱՆԻ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում է պատմամշակութային իրադարձությունները կամ անվանի մարդկանց հիշատակը հավերժացնելու նպատակով Երևան քաղաքում հուշատախտակների տեղադրման վերաբերյալ Երևանի ավագանու հետ համաձայնեցման կարգը:
2. Պատմամշակութային իրադարձությունները կամ անվանի մարդկանց հիշատակը հավերժացնող հուշատախտակները /այսուհետ՝ հուշատախտակ/ հանդիսանում են փոքր չափսի ճարտարապետական–քանդակագործական ստեղծագործություններ, որոնք, որպես կանոն, տեղադրվում են շենք–շինությունների ճակատային մասում՝ պատմամշակութային իրադարձությունները կամ անվանի մարդկանց հիշատակը հավերժացնելու նպատակով:
3. Պատմամշակութային իրադարձությունը կամ անձի վաստակն արտացոլվում են հուշատախտակի վրա փորագրված համառոտագրությամբ: Հուշատախտակը կարող է լինել հարթաքանդակի տեսքով՝ արտացոլելով դիմապատկեր և/կամ անձը կամ պատմամշակութային իրադարձությունը բնութագրող թեմատիկ-մասնագիտական դետալներ:
   Հուշատախտակը պատրաստվում է դիմացկուն նյութերից/ բնական քար, մետաղ/:

II. ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

4. Հուշատախտակի տեղադրումը հիմնավորող չափորոշիչներն են.

1) պատմամշակութային իրադարձության կարևորությունը Հայաստանի Հանրապետության և/կամ Երևան քաղաքի համար,
2) անվանի մարդկանց նվաճումները/ձեռքբերումները պետական, հասարակական, քաղաքական, ռազմական, տնտեսական գործունեության, ինչպես նաև մշակույթի, կրթության, գիտության, առողջապահության կամ սպորտի ոլորտներում,

3) որոշակի գործունեության ոլորտում անվանի մարդկանց ավանդը Հայաստանի Հանրապետության և/կամ Երևանի կայացման ու բարգավաճման գործում,
4) անվանի մարդկանց բնակությունը և/կամ գործունեությունը Երևան քաղաքում:

III. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

5. Հուշատախտակի տեղադրման վերաբերյալ Երևանի քաղաքապետին հասցեագրված դիմումները և/ կամ միջնորդությունները քննարկում է Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով), այն ստանալու օրվանից մեկ ամսյա ժամկետում:
6. Հանձնաժողովը ֆիզիկական անձանց դիմումները քննարկում է միայն պետական կազմակերպությունների, հասարակական միավորումների կամ իրավաբանական անձանց միջնորդության առկայության դեպքում:
7. Հանձնաժողովին ներկայացվող փաստաթղթերի ցանկը.
   1) դիմում Երևանի քաղաքապետին,
   2) պետական կազմակերպությունների, հասարակական միավորումների կամ իրավաբանական անձանց գրավոր միջնորդություն,
   3) պատմամշակութային իրադարձությունը կամ անվանի գործչի կյանքն ու գործունեությունը հանգամանորեն լուսաբանող նյութեր,
   4) պարգևների, մրցանակների կամ կոչումների առկայության դեպքում դրանք հաստատող փաստաթղթերի պատճեններ,
   5) տեղեկանք այն մասին, որ այդ տանը կամ հասցեում բնակվել կամ գործունեություն է իրականացրել հիշատակվող անձը,
   6) գրավոր պարտավորություն այն մասին, որ դիմումատուն կամ միջնորդող կազմակերպությունն իր վրա է վերցնում հուշատախտակի նախագծման, պատրաստման և տեղադրման ծախսերը՝ նշելով բանկային ռեկվիզիտները,
   7) հուշատախտակի տեղադրման վերաբերյալ անվանի անձի առաջին հերթի ժառանգների և շենքի սեփականատիրոջ (սեփականատերերի) համաձայնությունը,
   8) անվանի անձի մահվան վկայականի պատճենը:
8. Հանձնաժողովը՝ դիմումի և/կամ միջնորդության քննարկման արդյունքում ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.
   1) տալ դրական եզրակացություն,
   2) հետաձգել՝ լրացուցիչ տեղեկություններ հավաքելու և փաստաթղթային ճշտումներ կատարելու համար,
   3) առաջարկել դիմումատուին գտնել հիշատակը հավերժացնելու այլ տարբերակ /շենք–շինության նախասրահ կամ այլ փակ տարածություն/,
   4) մերժել՝ հստակ ներկայացնելով պատճառը:
9. Հանձնաժողովն իր եզրակացությունը ներկայացնում է Երևանի քաղաքապետին, որն էլ այն ընդգրկում է ավագանու նիստի օրակարգ (դրական եզրակացության դեպքում) կամ մերժման պատճառների մասին

(բացասական եզրակացության դեպքում) 10-օրյա ժամկետում տեղեկացնում է առաջարկության հեղինակին։

10. Երևանի քաղաքապետարանի կողմից հուշատախտակի տեղադրումը կարող է արգելվել շենքի պլանավորված իրացման, հիմնանորոգման կամ այլ արգելքների դեպքում, որոնց մասին 1-ամսյա ժամկետում հիմնավորված պարզաբանում է ներկայացվում դիմումատուին։
11. Հուշատախտակի տեղադրման վերաբերյալ Երևանի ավագանու կողմից համաձայնություն տալու որոշում կայացնելու դեպքում, դիմողը և/կամ միջնորդող կազմակերպությունը քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանման հաստատմանն է ներկայացնում հուշատախտակի նախնական էսքիզը։

IV. ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ

12. Հուշատախտակը, որպես կանոն, տեղադրվում է անվանի անձի մահվանից ոչ շուտ, քան 10 տարի անց։
ՀՀ Ազգային հերոսների, «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչման կամ միջազգային համբավի արժանացած մահացած անվանի անձանց դեպքում այդ ժամկետը կարող է նվազեցվել մինչև 5 տարի։
13. Երևան քաղաքում կարող է տեղադրվել անվանի անձի հիշատակը հավերժացնող մեկ հուշատախտակ՝ նրա բնակության կամ գործունեության իրականացման հասցեում։
14. Թանգարանների, պատկերասրահների, թատրոնների, կինոթատրոնների, մշակութային հաստատությունների և նմանատիպ այլ շենք-շինությունների վրա հուշատախտակ չի տեղադրվում։
15. Հուշատախտակի նախագծման, պատվիրման, տեղադրման հետ կապված ծախսերը կատարում են դիմողը կամ միջնորդող կազմակերպությունները։ Առանձնահատուկ դեպքերում կարող են սահմանվել բացառություններ։
16. Ապօրինի տեղադրված հուշատախտակը ենթակա է ապամոնտաժման տեղադրողի միջոցներով։
17. Հուշատախտակը, տեղադրվելուց հետո, հանդիսանում է տվյալ շենք–շինության չմասնատվող գեղարվեստա-ճարտարապետական մասնիկը և ենթակա չէ տեղափոխման, տեղահանման, ինչպես նաև փոփոխությունների։
18. Անհրաժեշտության դեպքում /շենքի վերանորոգում, իրացում, ապամոնտաժում/ հուշատախտակն ի պահ է հանձնվում անվանի անձի ժառանգներին։
19. Հուշատախտակի տեղադրման վերականգնումն իրականացվում է Երևանի քաղաքապետարանի ճարտարապետական կառույցի եզրակացության հիման վրա՝ այն կազմակերպության ֆինանսական միջոցների հաշվին, ում հաշվեկշռում է գտնվում տվյալ շենք–շինությունը։
20. Հուշատախտակի պահպանման համար պատասխանատվություն են կրում այն մարմիններն ու կազմակերպությունները, որոնք օրենքով սահմանված կարգով վերահսկում են տվյալ շենքային ֆոնդը։

21. Հուշատախտակների հաշվառումն իրականացնում է Երևանի քաղաքապետարանը, որը.

1) կազմում է հուշատախտակների հաշվառման միասնական գրանցամատյան,

2) իրականացնում է հուշատախտակների հաշվառում ոչ ուշ, քան 3/երեք/ տարին մեկ անգամ։

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ԱՆՎԱՆԻ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքում պատմամշակութային իրադարձությունները կամ անվանի մարդկանց հիշատակը հավերժացնող հուշատախտակների տեղադրման կարգը հաստատելու մասին» որոշման ընդունման նպատակն է սահմանել այն չափորոշիչները, որոնց առկայության դեպքում միայն կարող են տեղադրվել հուշատախտակներ, ինչպես նաև կանոնակարգել հուշատախտակների տեղադրման վերաբերյալ ներկայացված առաջարկությունների քննարկման և որոշումների ընդունման ընթացակարգերը, որոնք ՀՀ կառավարության 31.08.1999թ. թիվ 551 որոշմամբ սահմանված չեն:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Գ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ
Ա. ԱՍԱՏՐՅԱՆ
Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Մ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ
Մ. ՂԱԶԱՐՅԱՆ
Լ. ԻԳԻԹՅԱՆ
Մ. ԴՈՎԼԱԹՅԱՆ
Ա. ԵՐՆԶԱԿՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ԱՆՎԱՆԻ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում պատմամշակութային իրադարձությունները կամ անվանի մարդկանց հիշատակը հավերժացնող հուշատախտակների տեղադրման կարգը հաստատելու մասին» որոշման ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Գ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ
Ա. ԱՍԱՏՐՅԱՆ
Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Մ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ
Մ. ՂԱԶԱՐՅԱՆ
Լ. ԻԳԻԹՅԱՆ
Մ. ԴՈՎԼԱԹՅԱՆ
Ա. ԵՐՆԶԱԿՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ԱՆՎԱՆԻ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՅԼ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում պատմամշակութային իրադարձությունները կամ անվանի մարդկանց հիշատակը հավերժացնող հուշատախտակների տեղադրման կարգը հաստատելու մասին» որոշման ընդունման կապակցությամբ իրավական այլ ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Գ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ
Ա. ԱՍԱՏՐՅԱՆ
Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Մ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ
Մ. ՂԱԶԱՐՅԱՆ
Լ. ԻԳԻԹՅԱՆ
Մ. ԴՈՎԼԱԹՅԱՆ
Ա. ԵՐՆՋԱԿՅԱՆ